ԻՕԿՕՀԱՄԱ ՏՕԿԻՕ

Կիոտոից մի օրւայ ճանապարհ է մինչեւ Իօկօհամա:

Դեռ շատ ժամանակ չի անցել, երբ Իօկօհաման մի փոքրիկ աննշան ձկնորսական գիւղ էր:

Բայց մի յիսուն-վաթսուն տարիների ընթացքում այդ գիւղակից ծնւեց մի գեղեցիկ եւրոպական քաղաք, շնորհիւ այն հանգամանքի, որ սկզբում միայն այստեղ էր թոյլ տրւած եւրոպացիների բնակութիւնը. այնպէս որ Իօկօհաման ներկայացնում է եւրոպական քաղաքի մի կատարեալ նմուշը զուրկ այն ամենից, ինչ ճապոնական կնիք է կրում:

Ամեն բան այստեղ եկւոր է ու օտար, թէ կառքերը, թէ երթեւեկող հոսանքը, ուր տիրողը եւրոպական դէմքեր են, թէ փողոցներն իրանք, ուր մարդ իզուր կարօտով փնտրում է սիրունիկ կոկետ ճապոնական տնակները: Ինչ որ ճապոնական է, կարծես ճնշւած, պահւած, փախած լինի դէպի քաղաքի հեռաւոր անկիւնները:

Ինձ հետաքրքրեցին շէնքերը իրանց կառուցման տարօրինակ երկուութեամբ. տունը կարծես երկու անգամ է շինած իրար մէջ. դրսի պատեանը քարից, իսկ ներսը փայտակերտ, այնպէս որ երկրաշարժի ժամանակ, երբ քարէ տունը թափւում է, փայտակերտը մնում է անվնաս: Երկրաշարժը ինչպէս յայտնի է, շատ սովորական երեւոյթ է Ճապոնում, եւ հէնց իրանք ճապոնական կղզիները ամբողջապէս ծնունդ են հրաբղխային ոյժի գործունէութեան:

Իօկօհամաից հեռու չէ հռչակաւոր Հաչիմանի տաճարը Կամակուրայում, որտեղ կանգնած է Բուդդհայի հրաշալի հսկայական բրոնզէ արձանը: Այդ տաճարումն են պահւած յաղթական տրոֆէները – աւարները, որ ճապոնացիք խլել էին